

ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77¹, 77², և 77³ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Մեծ Մասրիկ համայնքի ղեկավարին՝
 - 1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերն իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37, 40, 41-րդ հոդվածների դրույթներին.
 - 2) ընդունվող նորմատիվ իրավական ակտերը ժամանակին և սահմանված կարգով լիազորված պետական մարմին ներկայացնել պետական գրանցման ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով.
 - 3) իրավական ակտերում փոփոխությունները, լրացումները կամ դրանց ուժը կորցրած ճանաչելը իրականացնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածներով.
 - 4) ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով խստորեն պահպանել համայնքի ավագանու նիստերի գումարման՝ ոչ ուշ քան 2 ամիսը մեկ, պարբերականությունը.
 - 5) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2007թ. ապրիլի 7-ի N 2 որոշումը և հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը նոր խմբագրությամբ.
 - 6) ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետով և 33-րդ հոդվածի 4-րդ կետով հաստատել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը.
 - 7) ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 40-րդ հոդվածների պահանջներով հաստատել և գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.
 - 8) հաշվապահական հաշվառումն իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Քննարկել հաշվապահությամբ զբաղվող մասնագետի տվյալ պաշտոնում թողնելու նպատակահարմարությունը.

- 9) քննարկել համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքների կրճատման նպատակահարմարության հարցը.
- 10) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հոկտեմբերի 20-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ